ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 7-Ի N 67-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գլխավոր տեղեկություն

Номер	N 1510-Ա
Տիպ	Որոշում
Тип	Исходный акт (13.11.2018-по сей день)
Статус	Գործում է
Первоисточник	Չի հրապարակվել պաշտոնական պարբերականում
Принят	ՀՀ վարչապետ
Дата принятия	12.11.2018
Подписан	Վարչապետի պաշտոնակատար
Дата подписания	12.11.2018
Дата вступления в силу	13.11.2018

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 նոյեմբերի 2018 թվականի N 1510-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 7-Ի N 67-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածով՝

1. Հայաստանի Հանրապետության վարչապետի 2005 թվականի փետրվարի 7-ի «Հայաստանի Հանրապետության մարզերի և համայնքների վարչական սահմանների նկարագրման աշխատանքների կարգավորման միջոցառումների մասին» N 67-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետից հանել «անհատական» բառը.

2) որոշման 2-րդ կետում և 3-րդ կետի «ա» ենթակետում «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե» բառերը և դրանց համապատասխան հոլովաձևերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտե» բառերով և դրանց համապատասխան հոլովաձևերով.

3) որոշման 2-րդ կետում «նախագահին» բառը փոխարինել «ղեկավարին» բառով.

4) որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

Հայաստանի Հանրապետության
վարչապետի պաշտոնակատար **Ն. Փաշինյան**

2018 թ. նոյեմբերի 12
Երևան

Հավելված
ՀՀ վարչապետի 2018 թ.
նոյեմբերի 12 -ի N 1510-Ա
որոշման

«Հավելված
ՀՀ վարչապետի 2005 թ.
փետրվարի 7 -ի N 67-Ա
որոշման

Կ Ա Զ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԵՐԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

- ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարար (հանձնաժողովի նախագահ)
- ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի ղեկավար
- Երևանի քաղաքապետ (համաձայնությամբ)
- ՀՀ Արագածոտնի մարզպետ
- ՀՀ Արարատի մարզպետ
- ՀՀ Արմավիրի մարզպետ
- ՀՀ Գեղարքունիքի մարզպետ
- ՀՀ Լոռու մարզպետ
- ՀՀ Կոտայքի մարզպետ
- ՀՀ Շիրակի մարզպետ
- ՀՀ Սյունիքի մարզպետ
- ՀՀ Վայոց ձորի մարզպետ
- ՀՀ Տավուշի մարզպետ
- ՀՀ բնապահպանության նախարարի տեղակալ
- ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ
- ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի տեղակալ
- ՀՀ վարչապետի աշխատակազմի տարածքային զարգացման և բնապահպահպանական վարչության պետ
- «Գեոդեզիա և քարտեզագրություն» ՊՈԱԿ-ի տնօրեն

(համաձայնությամբ)

- ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի հաշվառման և հողաշինարարության վարչության հողաշինարարության բաժնի պետ (հանձնաժողովի քարտուղար)»:

Հայաստանի Հանրապետության
վարչապետի պաշտոնակատար **Ն. Փաշինյան**